ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 08.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/40

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15136-17 գրությամբ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 16.08.2017թ. թիվ 02/16.4/5137-17 գրության հիման վրա, 18.08.2017թ. թիվ 03/26-3/15136-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Շին Նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը կարծիք ստանալու նպատակով 18.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/15191-17 գրությամբ դիմել է «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին:

Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ՝ Ընկերության կողմից Խորհրդին որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 10:40-ի և 01.09.2017թ. ժամը 12:10-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.08.2017թ. թիվ 02/27.1/4892-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի նոր մանկապարտեզի (60 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով 20.06.2017թ. կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն: Վերջինիս կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետի խախտմամբ (ծանուցումն ուղարկելու օրվանից չորրորդ աշխատանքային օրը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն 16.08.2017թ. թիվ 02/16.4/5137-17 գրությամբ ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 25.08.2017թ. ժամը 10:40-ի և 01.09.2017թ. ժամը 12:10-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/40 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/40 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի նոր մանկապարտեզի (60 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով 20.07.2017թ. ծանուցել է «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3-1 արձանագրության 1-ին կետի 1.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետի խախտմամբ (ծանուցումը ստանալու օրվանից ոչ թե երեք աշխատանքային օրվա ընթացքում, այլ չորրորդ աշխատանքային օրը):

6. Նույն արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15136-17, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 03.08.2017թ. թիվ 02/27.1/4892-17 և 16.08.2017թ. թիվ 02/16.4/5137-17 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ՀՀ Արարատի մարզի Նոր Ուղի համայնքի նոր մանկապարտեզի (60 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը «urbanpiu.gnumner7@gmail.com» էլեկտրոնային փոստի միջոցով 20.07.2017թ. ծանուցել է «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի «shinnaxagic@mail.ru» էլեկտրոնային փոստին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3-1 արձանագրության 1-ին կետի 1.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետի

խախտմամբ (ծանուցումը ստանալու օրվանից ոչ թե երեք աշխատանքային օրվա ընթացքում, այլ չորրորդ աշխատանքային օրը): Նույն արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «urbanpiu.gnumner7@gmail.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքի համաձայն՝ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացվել են **26.07.2017թ.:**

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել են Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկվելու օրվանից **(20.07.2017թ.)** չորրորդ աշխատանքային օրը **(26.07.2017թ.),** մինչդեռ Կարգի նշված կետի համաձայն՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը մասնակցի կողմից ներկայացվում են համապատասխան ծանուցումն ուղարկվելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ն «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորության խախտում, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.08.2017թ. թիվ 03/26-3/15136-17 գրությամբ «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04225682) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Շին Նախագիծ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**